# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՑԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հացավան համայնք,
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Հացավան, Հեռ. (094) 519030
, hatsavan.kotayk@mta.gov.am

N 71
*17 մարտ 2018թ.*

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԱՊԵՏ ԳՈՒԼՅԱՆԻՆ

Հարգելի պարոն մարզպետ

<<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի 9-րդ կետի համաձայն,Ձեզ է ուղարկվում Հացավան համայնքի ղեկավարի 2018թվականի մարտի 13-ի N 10-Ա, մարտի 14-ի N 11-Ա և մարտի 17-ի N 12-Ա որոշումները:

Առդիր՝ 3 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՇԱՎԱՐՇ ՍԱՐԳՍՅԱՆ

*Կատ. Աշխատակազմի քարտուղար՝ Ա. Բաղդասարյան*
*Հեռ./093-212366/*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հացավան համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Հացավան, (094) 519030, hatsavan.kotayk@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ՄԱՐՏԻ 2018թվականի N 10-Ա

## ՌՈՒՍՏԱՄ ՄԱՅԻՍԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի,Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման հաշվի առնելով այն հանգամանքը,որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը,դրանք կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում,կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք՝

*որոշում եմ*

1. Ռուստամ Մայիսի Գրիգորյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզի Հացավան համայնքի 1-ին փողոց 27 հասցեում գտնվող տնամերձ հողամասում ինքնակամ կառուցված բնակելի տունը 186.9քմ,թոնրատունը,անասնաշենքը Տարտ.= 57,0քմ և պարիսպը Տարտ.= 5.4քմ ճանաչել օրինական:
2. Քանի որ նշված կառույցները կառուցվել են մինչև 2001 թվականի մայիսի 15 օրինականացման համար գումար չգանձել:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՇԱՎԱՐՇ ՍԱՐԳՍՅԱՆ

2018թ. մարտի 13
գ.Հացավան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հացավան համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Հացավան, (094) 519030, hatsavan.kotayk@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ՄԱՐՏԻ 2018թվականի N 11-Ա

### ՌՈՒՍՏԱՄ ՄԱՅԻՍԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ՀԱՏԿԱՑՎԱԾ ԳՅՈՒՂ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐԻՑ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ռուստամ Մայիսի Գրիգորյանի դիմումը,ղեկավարվելով <<Ինքնակամ կառուցված շենքերի,շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասերի իրավական կարգավիճակի մասին>> 2002թ. դեկտեմբերի 26 ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներով,նկատի ունենալով այն հանգամանքը,որ Ռ.Գրիգորյանի սեփականաշնորհված 1.81հա հողամասից կադաստրային քարտեզագրման արդյունքում հաշվառված ավել օգտագործվող 0.292 հա հողամասը նախատեսված չէ այլ նպատակային և գործառնական նշանակությամբ օգտագործելու համար,այն չի ընդգրկված ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության,ինչպես նաև հնագիտական պատմամշակութային հողերի պահպանման գոտիներում չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և չի առաջացնում սերվիտուտ

*որոշում եմ*

1. Ճանաչել Ռուստամ Մայիսի Գրիգորյանի /ծն.24.04.1965թ./ սեփականության իրավունքը ըստ կադաստրային քարտեզագրման արդյունքների փաստացի օգտագործվող 2.102հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության և բնակելի կառուցապատման հողամասերի նկատմամբ:
2. Քաղաքաշինության և հողօգտագործման ֆինանսատնտեսագիտական բաժիններին
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՇԱՎԱՐՇ ՍԱՐԳՍՅԱՆ

2018 թ. մարտ 14
գ.Հացավան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հացավան համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Հացավան, (094) 519030, hatsavan.kotayk@mta.gov.am


# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 ՄԱՐՏԻ 2018թվականի N 12-Ա

## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2018ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀՆԱՐԱՎՈՐ ՋՐՀԵՂԵՂՆԵՐԻ,ՀԵՂԵՂՈՒՄՆԵՐԻ,ՔԱՐԱԹԱՓՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՍՈՂԱՆՔՆԵՐԻ ՆՎԱԶՈՑՄԱՆ ՈՒ ՎԵՐԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի <<բ>> և <<դ>> կետերի և Կոտայքի մարզպետի 2018թվականի մարտի 06-ի N 60-Ա որոշման 2-րդ մասի պահանջները համայնքի տարածքում 2018թվականի ընթացքում հնարավոր ջրհեղեղների,հեղեղումների,քարաթափումների և սողանքների կազմակերպման նպատակով

*որոշում եմ*

1.Հաստատել
  1) Կոտայքի մարզի Հացավան համայնքի տարածքում 2018թվականի ընթացքում հնարավոր ջրհեղեղների,հեղեղումների,սելավների,քարաթափումների և սողանքների պլանը համաձայն N 1 հավելվածի.
  2) տեղեկություններ համայնքի հակահեղեղային կառույցների հաշվառման վերաբերյալ համաձայն N 2 հավելվածի.
  3) առաջարկություններ համայնքին սպառնացող պոտենցիալ վտանգավոր տեղամասերի և բնակչության անվտանգության ապահովման ուղղությամբ նախատեսվող միջոցառումների վերաբերյալ համաձայն N 3 հավելվածի:
2. Մինչև 2018թվականի մարտի 20-ը Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Կոտայքի մարզային փրկարարական վարչությանը ներկայացնել սույն որոշմամբ հաստատված N1,N2,N3 հավելվածները:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ　　　　　ՇԱՎԱՐՇ ՍԱՐԳՍՅԱՆ

2018թ. մարտի 17
գ.Հացավան